Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

# ՀԱՅՏ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | *Գալստյան փողոցի մի հատվածի, Գալստյան փողոցի թիվ 60 բազմաբնակարան շենքի բակի, Մաշտոցի փողոցի թիվ 146.148.150 բնակելի շենքերի բակերի ասֆալտապատման և Բարեկարգման աշխատանքներ* |
| **Մարզ** | *ՀՀ Սյունիքի մարզ* |
| **Համայնքը /համայնքները** | Գորիս խոշորացված համայնք: Բնակավայրերը՝ Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Հարթաշեն, Վերիշեն, Ակներ, Որոտան, Քարահունջ, Շուռնուխ, Բարձրավան: |
| **Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | Գորիսը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիս-արևելյան հատվածում: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 240 կմ, մարզկենտրոն Կապանից՝ 67 կմ: |
| **Համայնքի /բնակավայրի բնակչությունը** | Համայնքի տարածքը կազմում է 31969.28 հեկտար, բնակչությունը՝ 29721 մարդ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1398 մ: |
| **Սահմանամերձ համայնք/բնակավայր** | Գորիսը սահմանամերձ համայնք է |
| **Բարձր լեռնային համայնք /բնակավայր** | Գորիսը բարձր լեռնային համայնք է |
| **Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն** | Համայնքն ունի կադաստրային քարտեզ, որը գյուղական բնակավայրերի համար հանդիսանում է գլխավոր հատակագիծ: Հատակագիծը հաստատվել է 2002թ վականին: |
| **Համայնքի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝**<br><br>**- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,**<br><br>**- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,**<br><br>**- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից** | Գորիսն ունի 95% լուսավորության ծածկույթ, աժմ անցնում է լուսավորման էներգաարդյունավետ կառավարման՝ նպատակ ունենալով էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումները: Քաղաքը գազաֆիկացված է, ունի 24 ժամյա ջրամատակարարում: Գազամատակարարման օգտվողների թիվը կազմում է 90 տոկոս: Ոռոգման համակարգից օգտվողների թիվը՝ 70 տոկոս: |

| | |
|---|---|
| **ոռոգվող հողատարածքների տոկոսը,**<br><br>**- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել Էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ** | |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | *Երևան-Արցախ միջպետական ճանապարհից Գորիս մտնող գլխավոր մուտքն ազդարարող ճանապարհը ամբողջովին քարուքանդ էր, գրեթե անանցանելի: Ճանապարհը անհիշելի ժամանակներից չէր նորոգվել, մինդեռ այն ոչ միայն ռազմավարական, նաև տնտեսական նշանակություն ունի: Հաշվի առնելով նշված ճանապարհի երթեկության ծավալները, սոցիալ-տնտեսական նշանակությունը, անհրաժեշտություն էր առաջացել պատշաճ ուշադրություն դարձնել և վերակառուցել այն: Նախորդ տարի ճանապարհի հիմնանորոգումն իրականացվեց սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, սակայն միջոցների սղության պատճառով, հարակից թաղամասի շենքերի բակերի և ճանապարհի շարունակությունը մնաց անբարեկարգ, մինչդեռ պլանավորված էր, որ հաջորդ տարի այն պետք է շարունակություն ունենան և ներառվի սուբվենցիոն ծրագրում: Քանի որ թաղամասը ռազմավարական ու տնտեսական նշանակություն ունի, անհրաժշետ է այն ամբողջական բարեկարգ տեսքի բերել՝ ստեղծելով արդյունավետ միջավայր ինչպես բնակիչների այնպես էլ հարակից տարածքներում գործող բիզնեսների, օբյեկտների համար:*<br>*Ուստի, համայնքի հիմնական խնդիրն է, բարելավել համայնքային ենթակառուցվածքները՝ գործող բիզնեսների համար ստեղծելով պայմաններ, ընդլայնել իրենց տնտեսական հնարավորությունները, խթանել նոր բիզնեսների ստեղծման հնարավորությունները: Այս Առումով առաջնահերթ են ճանապարհների բարելավման, ենթակառուցվածքների արդիականացման և այլ խնդիրների լուծումը: Գորիսը առնձնատների քաղաք է գլխավոր փողոցների բարեկարգման, մայթերի հիմնանորոգման հարցը օրակարգային է, քանի որ տարիներ շարունակ իրականացվել են փոսալման աշխատանքներև ասֆալտի հիմնական շերտը քայքայվել է: Անհրաժեշտ է խնդիրը լուծել ոչ թե ժամանակավոր , այլ՝ նպաստել որպեսզի երկարաժամկետ արդյունք ապահովվի: Հաշվի առնելով որ Մաշտոցի փողոցը քաղաքի գլխավոր մուտքն է ազդարարում և այդ փողցի վրա են գտնվում զբոսաշրջային հիմնական ենթակառուցվածքները, անհրաժեշտ է հիմնանորոգել, շարունակաբար փորձել ժամանակ առ ժամանկ ներդրումներ կատարելով ավարտին հասցնել էական նշանակության փողոցի ամբողջական բարեկարգումը:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | ➢ *Լուծվել է Գորիս մտնող տնտեսական և ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհի, հարակից թաղամասերի բակերի հիմնանորգման խդիրը*<br>➢ *Աշխուժացել է ճանապարհի երկայնքով տեղակայված անհատական բիզնեսների գործունեությունը, ավելացել է շահութաբերությունը, ընդլայնվել են բիզնես հնարավորությունները*<br>➢ *Բակերի բարեկարգման արդյունքում ՝ակտիվացել է երեկոյան զբոսանքի մշակույթը, սոցիալական շփումների համար նոր հնարավորություն է ստեղծվել*<br>*Ճանապարհի հիմնանորգումիվ հետո , համայնքը հարակից բազմաբնակարն շենքերի բակում պլանավորել է կառուցել խաղահրապարակ: Ուստի ծրագրի իրականացման արդյունքում, ակնկալվում է որ տարածքը վեր է ածվելու զբոսաշրջային, առևտրային աշխույժ հանգույցի:* |

<table>
<tr>
<td>Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները</td>
<td>
<ul>
<li>Թաղամասի ճանապարհի հիմնանորոգում</li>
<li>Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում</li>
<li>Գնման գործընթացի կազմակերպում</li>
<li>Շինարարական աշխատանքների կազմակերպում
<ul>
<li>❖ Ճանապարհի ասֆալտապատում՝ 7820քմ</li>
<li>❖ Մայթերի ասֆալտապատում և սալիկապատում՝ 870քմ</li>
<li>❖ Փողոցի երկայնքով անցնող ոռոգման առուների վերակառուցում՝ 440գծմ</li>
</ul>
</li>
</ul>
Ճանապարհի հանձնում և համայնքի բյուջեով պահպանման ծախսերի նախատեսում:
</td>
</tr>
<tr>
<td>Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի</td>
<td>Բարելավվող ենթակառուցվածքները համայնքային սեփականություն են և կընդգրկվեն հիմնական միջոցների հաշվեկշռում:</td>
</tr>
<tr>
<td>Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա</td>
<td>
Շահառուների քանակը
<ul>
<li>Առաջնային շահառուները թաղամասի բնակչությունն է</li>
<li>Բարեկարգվել են անանցանելի բակերը՝ բնակչության համար ստեղծելով հարմարավետ միջավայր</li>
<li>Աշխուժացել են հիմնանորգվող փողոցների երկայնքով գործող խանութների գործունեությունը, տնտեսական հնարավորությունները:</li>
<li>Զգալի ավելացել են խանութների և հյուրանոցների , սպասարկման, այլ օբյեկտների ծառայություններից օգտվողների թիվը: Եկամտաբերությունը աճել է:</li>
</ul>
Աշխուժացել է փողոցների վրա գտնվող մշակութային, կրթական հաստատությունների գործունեությունը:
</td>
</tr>
<tr>
<td>Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը</td>
<td>
<ul>
<li>➢ Թաղամասի ճանապարհների կառուցումը ենթադրում է նոր բիզնեսների ստեղծում և նոր աշխատատեղեր:</li>
<li>➢ Շինաշխատանքներում կներգրավվեն մոտ 25 մարդ</li>
</ul>
</td>
</tr>
<tr>
<td>Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը</td>
<td>
Նախորդ տարվա բյուջեն՝ 1 208 517 000 դրամ.<br>
Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:
<table>
<tr><th></th><th>Պլանը</th><th>Փաստացին</th><th>Տոկոս</th></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները<br>այդ թվում՝</td><td>1 678 377 000</td><td>1 382 507 063</td><td>82,3</td></tr>
</table>
</td>
</tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| -Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 1 208 517 000 | 1 288 932 074 | 106,6 |
| - Սեփական եկամուտներ | 241 665 300 | 327 759 374 | 136,6 |
| -Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 469 860 000 | 93 574 989 | 19,9 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 1 982 707 681 | 1 217 181 372 | 61,4 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 1 212 710 300 | 975 783 089 | 80,0 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 769 997 381 | 311 427 406 | 40,4 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 769 997 381 | 311 427 406 | 40,4 |
| - ճանապարհաշինութ. | 517 116 213 | 127 796 619 | 24,7 |
| - ջրամատակարարում | 11 308 798 | 973 500 | 8,6 |
| - փողոցային լուսավորություն | | | |
| - Արտադպրոցական դաստիարակություն | 10 000 000 | 5 357 000 | 53,5 |
| - Շրջակա միջավայրի պաշտպանություն | 145 574 989 | 135 792 989 | 93,2 |
| - Բնակարանային շինարարություն | 83 997 381 | 41 507 298 | 49,4 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

**1 186 011 000** դրամ.

*Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | ***Պլանը*** |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝* | 1740720,2 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 1186011,0 |
| - սեփական եկամուտներ | 248039,0 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 554709,2 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 2211343,1 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 1190715,4 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 1020627,7 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | 1020627,7 |
| - գյուղատնտեսություն | 8283,7 |
| - ճանապարհաշինություն | 608344,0 |
| - ջրամատակարարում | 100000,0 |
| - փողոցային լուսավորություն | 15000,0 |
| - Նախադպրոցական կրթություն | 200000,0 |
| - Շրջակա միջավայրի պաշտպանություն | 35000,0 |
| - Բնակարանային շինարարություն | 52000,0 |
| - Սարքավորումներ | 2000,0 |

| | |
|---|---|
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝**<br><br>**- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը ___________ դրամ,**<br><br>**- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ ___________ դրամ,**<br><br>**- ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ ________ դրամ,**<br><br>**- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ ___________ դրամ,**<br><br>**- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ ___________ դրամ,**<br><br>**- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ ___________ դրամ,**<br><br>**ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը ___________ դրամ** | **270 000 000 ՀՀ դրամ (100%)**<br><br>*Մինչև ընթացիկ տարվա վերջ չավարտվող ծրագրերի դեպքում՝ հստակ առանձնացնել ընթացիկ տարվա ընթացքում նախատեսվող աշխատանքներն ու ծախսերը և հաջորդ տարվա աշխատանքներն ու ծախսերը:* |
| ***Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը*** | **121 500 000 դրամ (45%)** |

| | |
|---|---|
| *Այլ ներդրողներ* | **......... դրամ ( .... %),** *նշել ներդրողի անունը:* |
| *Ծրագրի իրականացման տևողությունը* | **Սկիզբը հունիս 2022թ.**<br><br>**Տևողությունը 6 ամիս** |
| *Ծրագրի ծախսերը* | *Մանրամասն ներկայացնել ծախսերը՝ կցելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերը:*<br><br>*Ծրագրով նախատեսվող ծախսերը պետք է լինեն իրատեսական, ֆինանսական հաշվարկները և նախահաշիվները՝ հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն:*<br><br>*Սարք-սարքավորումների ձեռքբերման դեպքում ներկայացնել հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն տեխնիկական բնութագրերը, ֆինանսական գնահատականները և առնվազն երեք կազմակերպությունների կողմից տրված գնահարցումները:* |
| *Ամսաթիվ* | 01.02.2022թ. |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին** (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

**Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Կարեն Ջավահիրյան**
**Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը՝ 093103301**

---

**Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,**
**Համայնքի ղեկավարի պ/կ**

______________________

Արտյոմ Աղաջանյան
(անունը, ազգանունը)
Կ. Տ.